ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"___" _____ 2011թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի "Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" N 1038-Ն որոշմամբ հաստատված հավելվածի "Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում" (այսուհետ՝ ցանկ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 060100 տողը շարադրել նոր խմբագրությամբ.

060100	Բուժական գործ	62	Բժշկագիտության բակալավր
		68	Բժիշկ
		68.1	Բժշկության մագիստրոս (Հանրային առողջություն)

2) 060200 տողը շարադրել նոր խմբագրությամբ.

060200	Ստոմատոլոգիա	62	Ստոմատոլոգիայի բակալավր
		68	Բժիշկ ստոմատոլոգ

3) 060300 տողը շարադրել նոր խմբագրությամբ.

060300	Դեղագիտություն	62	Դեղագիտություն բակալավր
		68	Դեղագիտության մագիստրոս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: